ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ

ԲԱԴԱԼՅԱՆ Գ. Ս.

Ռ. Հովսեփյանը արդի հայ գրականության ակնառու ներկայացուցիչներից է: Նա մեզ է ներկայանում պատմվածքների մի քանի ժողովածուներով: «Որոնումները» (1965) նրա գրական որոնումների հանրագումարն է, որին հաջորդել են «Ամենատաք երկիրը» (1977), «Երկար, հրաշալի օր» (1980), «Ես ձեր հիշողությունն եմ» (2003), «Ճայերը» (2009) պատմվածքների ժողովածուները, իսկ «Ընտիր երկերում» (1987) վեպերի ու վիպակների կողքին տեղ են գտել «Ամենատաք երկիրը» և «Առաջին կինը» պատմվածքների շարքերը:

Ռուբեն Հովսեփյանի ստեղծագործություններն իրական կյանքի ճշմարտացի արտացոլումն են: Դրանք ռեալիստական յուրահատուկ երանգներ ունեն, հագեցած են ազդու, համոզիչ պատկերներով: Հեղինակը նկարագրում է ժամանակակից կյանքը՝ արտահայտելով իր խոհերը մարդու և նրա ապագայի վերաբերյալ: Հեղինակային ինքնատիպ մտահղացումները, սուր դիտողականությունը կարևոր նշանակություն ունեն Ռ. Հովսեփյանի երկերում՝ ռեալիստական, կենդանի պատկերներ ստեղծելու առումով, որոնք աչքի են ընկնում ներքին դրամատիզմով, գեղարվեստական արտահայտչամիջոցների պարզությամբ ու բնականությամբ: Ռ. Հովսեփյանի ստեղծագործական խորը վերլուծությունները ժամանակի հայկական արձակի ինքնատիպ դրսևորումներից են: Նրա պատմվածքներում բացահայտվում են կյանքի բնորոշ, տիպական գծերը: Որոշ ստեղծագործություններ ունեն նովելային կառուցվածք. յուրօրինակ են դրանց սկիզբն ու ավարտը, միահյուսված են իրականն ու անիրականը, և լուծումը ցնցում է ընթերցողին («Մարիամ տատի գանձը», «Առաջին կինը», «Ձնե լաբիրինթոս», «Ձայներ»):

Ռ. Հովսեփյանի պատմվածքները աչքի են ընկնում ռեալիստական խտացումներով. ստեղծված պատկերներն իրական են, ինքնատիպ ու նոր: Դրանց հատուկ են պարզությունն ու հակիրճությունը: Նշենք, որ գրողի լեզվառճական համակարգում չեն նկատվում ճոռոմաբանություն ու վերամբարձ պերճախոսություն: Ամենուր առաջնային պլանում է կենսական ճշմարտացիությունը՝ առանց կեղծ գունավորման ու ռճավորման: Լավատեսությամբ են համակված գրեթե բոլոր գործերը: Ա. Խանբաբյանը գրում է՝ Ռ. Հովսեփյանի «գլխավոր հերոսները բարությունն ու մարդկայնությունն են»[1]: Գրողի ուշադրության կենտրոնում է հասարակ մարդու կերպարի որոնումը և նրա գեղարվեստորեն ճշմարտացի պատկերը: Պատմվածքների հերոսներն իրենց կյանքն անցկացնում են ծանր տառապանքների ու դառը փորձությունների մեջ: Հեղինակը գործող անձանց

---

[1] **Ханбабян А.** *Свет человечности и доброты (Коммунист, 22.VI.1986).*

վարքագծի մեջ է բացահայտում էականն ու ամենաբնութագրականը: Նրանք ժողովրդի զավակներն են, հասարակ մարդիկ, որոնք արձակագրի համար միշտ էլ գտնվում են առաջին տեղում: «Նրա սիրելի հերոսները աստվածային պատգամներով ապրող հայեր են, որոնք ընդվզում են անարդարությունների ու բռնության դեմ»,- գրում է Ա. Դոլուխանյանը[2]*: Ռ. Հովսեփյանի ստեղծագործության մեջ զգացվում է անսահման սերը մարդու և հայրենիքի նկատմամբ («Վերադարձ», «Ապրիլ», «Մեր բաժին ճաշը», «Արագիլները վերադարձան»): Գրողը ընթերցողին առինքնում է իր անբրռնազբոս պատումով և ինքնատիպ մտածողությամբ՝ աշխարհը ներկայացնելով իր ազնիվ կենսափորձի լույսի տակ: «Արձակագրի գրիչը պատկերավոր ու համոզիչ է նաև պատմվածքներում: Մարդկային հոգու, բնավորության նուրբ ու ազնիվ թեմաներ է բարձրացնում հեղինակը: Ընդամենը մի քանի էջում նա կարողանում է գեղարվեստական ու հոգեբանական սպառիչ բնութագրումներ տալ իր առաջ քաշած հարցերին»,- գրում է Ա. Սարգսյանը*[3]*:*

Ահա, օրինակ, «Արագիլները վերադարձան» *պատմվածքը. այստեղ հեղինակը նուրբ ելևէջներով մենախոսում է ընթերցողի հետ: Փոքրիկ տղայի ընկալմամբ՝ հենց արագիլներն են բերում գարունը, իսկ նրանց գալուն պես սկսում են փոխվել բնությունը, մարդիկ: Տղայի պապը նրան ասել էր, թե «արագիլն էլ մարդ է և մարդու նման սիրել գիտե»*[4]*: Հուզիչ են պապի խոսքերը՝ արագիլների հավատարմության մասին. երբ հրացանավորը կաքավի փոխարեն սխալմամբ կրակում է հայր արագիլի վրա, մայր արագիլը ձմռանը չի չվում տաք երկրներ, մնում է գյուղում՝ սպասելով ընկերոջ վերադարձին, սակայն չի դիմանում ձմռան ցրտին և «մեռնում է»: Իսկ տղայի հայրը քաղաք մեկնած որդուն հորդորում է վերադառնալ հայրական տուն, որը պետք է նորոգվի, հողը պետք է մշակվի: Տղան որոշում է գնալ՝ տեսնելու արագիլներին, ծառերից խեժ պոկելու և զգալու գարունը:*

Փոքր մարդու՝ Թութիկ քույրիկի և ֆինբաժնի աշխատակից Գեվորգի հակամարտությունն է դրսևորվում «Ութերորդ վանդակը» *պատմվածքում: Գևորգից բոլորը վախենում էին, սակայն նա «մի բարակ մարդ էր, փչեիր վրան՝ կընկներ»*[5]*: Գևորգը իր ճշմարտացիությունն ապացուցելու համար Թութիկին բացատրում է, թե ինչպես է լցվում պետական գանձարանը: Նա հողի վրա քառակուսի է գծում և ութ հավասար մասերի բաժանում: Ապա հավաստիացնում է, որ առաջին վանդակի մեջ են գնում տուգանքները, երկրորդում՝ գործարանների, երրորդում՝ կոլխոզների, չորրորդում՝ արտաքին առևտրի, հինգերորդում՝ ներքին առևտրի, վեցերորդ-յոթերորդում՝ կինոների, թատրոնների տված օգուտը, իսկ վերջին վանդակն էլ եկա-*

---

[2] **Դոլուխանյան Ա.,** *Տաղանդավոր գրողն ու թարգմանիչը (Գրական թերթ, 20.III.2009, էջ 4):*

[3] **Սարգսյան Ա.,** *Երկու գիրք՝ երկու վիպակ (Սովետական Հայաստան, 1966, N 9, էջ 4):*

[4] **Հովսեփյան Ռ.,** *Ընտիր երկեր, Ե., 1987, էջ 365:*

[5] *Նույն տեղում, էջ 426:*

մտահարկերի տեղն է: Թութիկը չի ուզում հարկատու լինել և թաքուն ջնջում է դատարկ քառակուսին՝ այդպես արտահայտելով իր բողոքը: Հետաքրքիր բնութագիր ունի Գևորգը. «Բնությունը Գևորգի պակասավոր օրգանների ուժը տվել էր նրա ականջներին»[6]: Կոշկակար Հայկը Գևորգին անվանում է «ականջ, մի մեծ, խոշոր, մի աննման, մի սիրուն, մի այլանդակ, մի պաշտելի, մի հրեշավոր ականջ»[7]: Իսկ Թութիկ քույրիկը «փոքր» մարդ է, որն անզոր է իրականության դեմ: Նա չի կարողանում ընդունել դաժան իրականությունը. գաղտնի կար էր անում, եկամուտն էլ քիչ էր ու չի ցանկանում հարկատու լինել: Մինչդեռ ֆինբաժնի Գևորգը ամեն կերպ փորձում է նրան հիշեցնել օրենքի և իր պարտավորության մասին:

«Մեր բաժին ճաշը» *պատմվածքի թեման պատերազմն է. թիկունքի փոքրիկ քաղաքում իրենց բաժին ճաշը ստանալու է գնում ճակատայինի որդին: Նա ապրում է հորաքրոջ տանը, որովհետև մայրը լքել է նրան, իսկ հայրը մարտի դաշտում է: Տղան ճանապարհին մտմտում է. «Պիտի հետևեմ, որ չխաբեն, ճաշը լցնեն մինչև այս խազը: Եթե մսի կտորներ լինեն, կեղտոտ մատներս չպիտի մտցնեմ ճաշի մեջ, պիտի համբերեմ, տուն հասնեմ ու ասեմ, հորաքույր, ես միս եմ ուզում: Հորաքույրը կտա՝ կտա, չի տա՝ չի տա»[8]: Ճանապարհին հանդիպում է ասես հեքիաթից դուրս եկած բարի, աղքատ մի ծերուկի, որի կերպարը հավատով է համակում ընթերցողին: «Նույնիսկ եթե ոչինչ չկա, կարող ես ոգևորությամբ սնվել: Ոգեվորությունը քեզ կարող է տալ ամեն ինչ»,- ասում է նա տղային[9]: «Այսպիսի մի պապիկ էր պետք այն օրը,- մտածում է տղան,- երբ մայրս թողնելով ինձ հորաքրոջս տանը, գնաց ու չվերադարձավ, այսպիսի մի պապիկ էր հարկավոր այն օրը, երբ հայրս գնացք նստեց երկրորդ անգամ ռազմաճակատ մեկնելու համար»[10]: Իսկ ծերունին գայրանում է անարդարության համար. «Սրիկաներ, մսի կտոր էլ չեն գցել: Մի կտոր միսն ափսոսացել են ճակատայինի ընտանիքի համար: Նրանք չարաշահում են մեր ոգևորությունը: Վերցրու, վերցրու գդալը, տղաս, և երևակայությամբ միս հանիր ամանից»[11]: Նրանք իրենց երևակայությամբ անհամ ճաշը դարձնում են համեղ, յուղալի: Ու երկուսով վայելում են այն՝ մոռացած, որ աշխարհում ահեղ պատերազմ էր: Տղան և ծերուկը կյանքի դաժանությանը հաղթում են իրենց ոգևորության շնորհիվ:*

«Ձայներ»: *Հերոսը՝ Գարսևանը և նրա կինը՝ Խանումը, փրկվել են եղեռնից, վաղուց օջախ ունեն, սակայն նրանց դաժան անցյալի ձայներն անմարելի են մնացել: Մարդը երբեք կապը չի խզում իր ակունքներից. սա հեղինակի ընդհանրացումն է: Դա գոյատևման պայման է: Ողբերգականորեն զոհված ազգականների, հարազատների, հայրենակիցների՝ Անիից կանչող ձայները*

---

[6] *Նույն տեղում, էջ 427:*
[7] *Նույն տեղում, էջ 431:*
[8] *Նույն տեղում, էջ 329:*
[9] *Նույն տեղում, էջ 332:*
[10] *Նույն տեղում, էջ 333:*
[11] *Նույն տեղում, էջ 336:*

Գարսևանի գիտակցության մեջ ծանր նստվածք են թողնում՝ տեսանելի և շոշափելի: Գարսևանն ուշացնում է խաղողաքաղը. Խանումի մի հեռավոր ազգականը՝ Ավետիսը, դեռ գարնանն էր ասել՝ առանց իրեն խաղող չքաղեն: Խանումի ծնողներն ու քույր – եղբայրներն անհայտ կորել էին, այդ ազգականը նրա մեջ հարազատության զգացողություն էր առաջացնում: Ավետիսն ասում էր, որ ինքը ձայներ է լսում Անիի կողմերից. իբր հայեր են հավաքվում ավերակներում ու կանչում, և իբր, նրանց մեջ Խանումի հոր ձայնն է լսվել: Նա սպասում է Ավետիսին՝ միևնույն ժամանակ տվայտելով փչացող բերքի պատճառով: Բայց պարզվում է, որ Ավետիսն ընդամենը զբաղված էր մսի վաճառքով: Ճշմարտացի է հեղինակի եզրահանգումը. այս կյանքը կրկես է, որտեղ գլուխ գլխի, ուս ուսի կանգնած ենք բոլորս, ու մի օր հողը այս ծանրությանը չի դիմանալու: Գրականագետ Ա. Ղահիրյանը գրում է. «Այս պատմվածքում ձայներից մեկն էլ հեղինակինն է. նա սկսում է ապրել հեղինակի մեջ, հեղինակն էլ՝ հերոսի: Ռուբեն Հովսեփյանի արձակում կապերը խոր թաքնված են»[12]:

«Նոներ» *պատմվածքը հեքիաթի և իրականության մասին է: Հերոսը՝ փոքրիկ տղան, մտորում է իրենց ընտանիքին վիճակված դրժվար կացության մասին և երազում չորս նուռ ունենալ: Դա նրա համար հեքիաթ է, որը իրականություն դարձնելու մի հնար է փնտրում. դա համոզիչ է թվում թոշակն անհոգ ծախսող պապի, աշխատավոր հոր և հարևան որբևայրի Վարթեի առօրյայի վերաբերյալ իր դատողություններում: Նա այնքան էր փափագում նուռ ունենալ, որ նույնիսկ վառարանի դռնակից դուրս թռչող բոցի մեջ տեսնում էր, որ Զմեռ պապը իրեն չորս նուռ է նվիրում: Պատմվածքում նուռը հեքիաթի է վերածվում. դրա պսպղուն, կարմիր հատիկները ադամանդներ են ու հակինթ: Եվ փոքրիկը մտածում է, որ աշխարհում ամենից դժվար բանը հեքիաթը իրականություն դարձնելն է: Ու երբ հայրը տղայի բաղձանքը կատարելու համար ձմռան գիշերը մաքրում է կառամատույցը ձյունից՝ փող վաստակելու, իսկ տղան, Վարթեի կոշտ ձեռքերով լողացած, մաքրված, քնում է՝ այլևս նոների մասին չերազելով, կատարվում է անհնարինը. առավոտյան բարձի տակ չորս նուռ է գտնում՝ հոր հիվանդանալու գնով: Այստեղ արդեն հեքիաթ չկա. իրական է հայրական սերը որդու նկատմամբ: Դա մարդկային այնպիսի խոր ու գեղեցիկ զգացմունք է, որը հուզում, մաքրում է ընթերցողի հոգին և հավաստում, որ իսկապես «ամենից դժվար բանը հեքիաթը իրականություն դարձնելն է»[13]:*

«Ամենատաք երկիրը» *արտացոլում է սերը հայրենիքի, սեփական տան հանդեպ: Երեք սերունդների ներկայացուցիչները՝ պապը, որդին, թոռը, տարաբնույթ կարծիքներ ունեն հայրենիքի ընկալման հարցում: Սակայն երեքն էլ տանը տաքություն ունենալու բուռն մղումի մեջ դատարկ ու հանգած օջախում երևակայությամբ հզոր կրակ են բորբոքում միասին, երազանքի անշեջ բոց: Սա այլաբանական խորհուրդ ունի. պետք չէ փնտրել հարստութ-*

---

[12] **Ղահիրյան Ա.,** *Տաք հողի սերը (Ավանգարդ, 26.X.1977):*

[13] **Հովսեփյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 363:*

յուն, առատություն կամ ջերմություն օտար ափերում. չէ՞ որ սեփական երկիրն ունի այն ամենը, ինչը մարդու բարօրության գրավականն է: Թեկուզ ամենահետին կամ ամենահարուստ, անգամ ամենացուրտ երկիրը, եթե այնտեղ են արմատակալել քո պապերը, այսինքն՝ քո հայրենիքը, ամենատաք երկիրն է աշխարհում: Պատմվածքի վերջում ազգին հայհոյող, նրան աշխարհագրությունից «երկուս» նշանակող, տաք երկիր ցանկացող պապը համոզվում է, որ, չնայած իրենց տունը կղզի չէ, սակայն երկիր է, իսկ որդին ավելացնում է, որ ամենատաքն է ու ամենահարուստը: «Տաք, շատ տաք սիրուց ու ցավից, որ տարածվում է, դուրս է գալիս Ռ. Հովսեփյանի պատմվածքի գծած սահմաններից»,- գրում է Վ. Գրիգորյանը[14]:

«Սայլը» *պատմվածքի հերոսը՝ Դերենիկը, խոպոտվելու աստիճան վիճում է սայլապանի հետ: Վիճում է ուժի և թուլության, բարու և չարի, վրեժի ու լիակատար ներումի մասին: Ջարդ ու եղեռն տեսած սայլապանը, □մեռած մարդու գիտություն» համարելով նրա խոսքերը, բողոքում է տիրող սոցիալական անարդարության դեմ, նրան ծաղրելով անվանում «Քրիստոս» և «ուրիշ աստված» պահանջում, քանի որ կյանքի մթին խորխորատներում շատ դառնություններ էր ճաշակել, այնպիսի արհավիրքների միջով էր անցել, որ կյանքը արժեզրկվել էր իր համար: Ապրում էր անցյալի անջնջելի հուշերով և սեփական անբեկանելի ճշմարտությամբ: Դա հասկանում է Դերենիկը և հանգում այն մտքին, «Թե ահա քանի դար ինքը իր ճշմարտությամբ, սայլապանն իր ճշմարտությամբ նստած են այս ճոճռան սայլը, գլորվում են անվերջ և ոչ խորտակվում են, ոչ էլ լեռան գագաթն են բարձրանում»[15]:*

«Պատմության դասը»: *Պատմության նախկին ուսուցիչը կանխազգում է մոտալուտ մահը, կարծես լսում է դրա չարագուշակ շրշյունը: Նրան անհանգստացրել էր աշակերտներից մեկի զանգը, որը հարցրել էր, թե ինչպես է մահացել Արշակ թագավորը: Այդ զանգից հետո ներքին տագնապ ուներ, թե հենց այդ աշակերտը կարող է շրջել պատմության էջը և այն նորից սկսել: Եվ մտածում է մեռնող ուսուցիչը. «Պատմությունը ոչ սկսվում է, ոչ էլ ավարտվում է»□[16]: Ու և մի պահ նրան թվում է, թե ինքը չի հանդիպել համբուրվող զույգին, նրան չի առաջարկել իր բնակարանը, գուցե դրսում ձյուն չի գալիս, գուցե իրեն չի զանգել նախկին աշակերտը, գուցե հորինվածքներ են Դրաստամատը, Արշակը և ընդհանրապես պատմությունը: Ի՞նչ են թողնում մարդիկ իրենցից հետո և ի՞նչ են տանում իրենց հետ: Փիլիսոփայական հարցադրումը խորհելու տեղիք է տալիս ամենքին՝ քարոզելով մաքուր ու անաչառ ապրել այս կյանքում, քանի որ կյանքի ճահիճն իր մեջ է առնում բոլորին անխտիր: Քչերին է հաջողվում լինել անշահախնդիր, դեմ կանգնել չարիքին ու կեղծիքին և թեքել պատմության ղեկը:*

Գյուղից քաղաք տեղափոխված հերոսը («Խորանարդիկներով տունը») *վարձով սենյակ է փնտրում իր ընտանիքի համար, սակայն նրա ջանքերն*

---

[14] **Գրիգորյան Վ.,** *Տաք երկիր (Գրական թերթ, 20.XI.1981, էջ 3):*

[15] **Հովսեփյան Ռ.,** *նշվ. աշխ., էջ 487:*

[16] *Նույն տեղում, էջ 495:*

ապարդյուն են: Նա քաղաք էր եկել ապագայի վառ հույսերով, ձգտումներով՝ պատկերացում չունենալով այն մասին, թե որքան դժվարությունների ու խոչընդոտների կարող է հանդիպել քաղաքում, որտեղ էլ մտաբերում է հոր խոսքերը՝ «Գյուղից գնացողը պիտի գրավել իմանա»[17]: Գիտակցելով արդեն իսկ ստեղծված անելանելի իրավիճակը՝ նա տենդի մեջ կնոջն ասում է, որ «զգույշ քայլի, հատակը տատանվում է, և հանկարծ կարող է փլվել աղջկա խորանարդիկներով տունը»[18]: Իսկ աղջկա կառուցած խորանարդիկներով տունը կարծես դառնում է «մարդկային կամքի մի շտեմարան»:

«Առաջին կինը» *ստեղծագործության առանցքը մի պատմություն է կախարդական երկանքի մասին, որը սխալ պտտելու հետևանքով նավը լցվում է աղով ու խորտակվում, երկանքն էլ սուզվում է մինչև հատակ՝ անընդհատ աղ աղալով: Ծովն աղիանում է, ձկները՝ ոչնչանում: Սա մի պատմություն է, որտեղ հրաշալիորեն փոխկապված են իրականն ու հեքիաթայինը: Քննվում են չարն ու բարին, ագահությունն ու ժլատությունը: Կախարդական երկանքի հեքիաթի միջոցով արձակագիրը ցուց է տալիս, թե ինչպես է շահախնդրությունը հաղթում՝ պարտության մատնելով անգամ կարծեցյալ հաղթողին: Հերոսի մտքում պատկերվում է մի տեսարան, թե ինչպես է ինքը առաջին կնոջ հետ քայլում աղի լճի հատակով, որտեղ տառապանքը վերածվում է մարդկային ամենաթանկ արժեքների՝ մայրություն, սեր, բարեկամություն, ինքնազոհաբերում:*

«Արդի գրողների ըմբռնումներում կարևոր տեղ են զբաղեցնում քրիստոնեական միֆերը, հատկապես ջրհեղեղը, Ահեղ դատաստանը, Նոյը, Հիսուսը»[19]: Դրանց անդրադարձել է նաև Ռ. Հովսեփյանը («Նոյը»): *Սարգիս պապը դժգոհում է կյանքից, մարդկային անտարբերությունից ու մեղավոր աշխարհից: Նա հանդես է գալիս որպես մի երկրորդ Նոյ, որին հայտնվում է Աստված և նախազգուշացնում միջուկային պատերազմի աղետի մասին, թե մարդկությունը ոչնչանալու է: Բայց որպեսզի երկրի երեսից չվերանա Աստծո ստեղծած □մարդ–արարածը□, թող նա՝ Սարգիսը, խորը փոս փորի, պատերը ամրացնի ցեմենտով, ուտելիքի, ջրի յոթ տարվա պաշար հավաքի և իր ընտանիքի հետ ապաստանի այդ փոսի մեջ: Սարգսին ոչ ոք չի հավատում, և սուտն ատող պապին խենթ են համարում, տեղափոխում են հոգեբուժարան, որտեղ նա չի կորցնում լավատեսությունը, ապավինում է «Նրա վերջին ընտրյալի վերջին հնարավորությանը»: Գալիքի նկատմամբ ունեցած լուսավոր հավատն ու հույսը հաղթանակում են՝ ի դերև հանելով անիրավ աշխարհի սուտն ու կեղծիքը: «Այստեղ Ռ. Հովսեփյանը բիբլիական անցյալն ու ներկա իրադրությունը դիտում է մեկ միասնական և ամբողջական մոդելի մեջ: Եվ ոչ միայն սուտը, այլև ուզածդ բարոյական վրիպում, հոգու յուրաքանչյուր շարժում հասցվում է ծայրագույն վիճակի»,- գրում է Ի. Նախշունը[20]:*

---

[17] *Նույն տեղում, էջ 459:*

[18] *Նույն տեղում, էջ 478:*

[19] **Քալանթարյան Ժ.,** *Ուրվագծեր արդի հայ գրականության, Ե., 2006, էջ 162:*

[20] **Նախշուն Ի.,** *Վերելք (Սովետական գրականություն, 1986, N 12, էջ 126):*

«Ձնե լաբիրինթոսում»: *Մուշեղը ատում է հին օրերի ընկերուհուն՝ Էսթերին, փորձում է ամեն կերպ ցավ պատճառել նրան, չէ՞ որ վերջինս տարիներ առաջ բարբարոսաբար դավաճանել և տրորել է իր զգացմունքները՝ գայթակղվելով ամուսնու ուժով և հնարավորություններով, որն աշխարհում ամեն ինչ առնում է փողով՝ կին, տուն, դատավոր և նույնիսկ երեխա: Թեմա, որն արդիական է բոլոր ժամանակների համար, ոտնահարվում են բարոյականությունը և զգացմունքները հանուն նյութական արժեքների: Ընթերցողը հերոսների հետ ասես ապրում է այն ցավը և ափսոսանքը, որոնք տարիների ընթացքում կարծես ամբարվել էին «Ձնե լաբիրինթոսում»: Ի վերջո, ատելության և վրեժխնդրության հեղեղը Մուշեղի մեջ կտրրվում է, իսկ սերը մնում է անփոփոխ ու մաքուր:*

Բոլշևիկների և դաշնակցականների պայքարն է պատկերված «Վերադարձ» *պատմվածքում: Լևոն բեկը Կաղ Սուրենի հորդորով լքում է հայրենի գյուղը: Տարիներ անց գորշ փողկապը վզին, ձեռնափայտը ձեռքին՝ մի ծերուկ է հայտնվում գյուղում: Պարզվում է, որ Լևոն բեկն է. Ամերիկայից է վերադարձել: Գրողը կարևորում է մարդու ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մտքի և հոգու դարձը հայրենիք: Տպավորիչ ու ազդեցիկ են անանց սերն ու կարոտը, հոգու ճիչն ու արյան կանչը նկարագրող տողերը:*

Հուզիչ է «Մարիամ տատի գանձը» *պատմվածքը: Այն փոքր ծավալի մեջ մեծ ասելիք ունի: Մարիամ տատը այն բացառիկ մարդկանցից էր, որոնք «կենդանության օրոք արդեն քայլում են առասպելների ուղեկցությամբ»*[21]*: Նա մեծ ու իմաստուն կին էր: Նկուղում միշտ փակ էր պահում իր սնդուկը, որի մեջ, ըստ համագյուղացիների տարածած առասպելի, շատ գանձեր կային, իսկ խորհրդավոր սնդուկի բանալին միշտ կախված էր տատի վզից: Սնդուկի պարունակությունը բորբոքում էր բոլորի երևակայությունը: Մինչդեռ դրա ներսում տատի շորերն էին և մի եռանկյունաձև ծրար, որի մեջ ռազմաճակատից չվերադարձած որդու վերջին նամակն էր և մի չորացած տերև. «Ներիր, մայր, ծաղիկ չգտա: Հրաշքով փրկված մենավոր մի կեչի կա միայն, որի տերևն էլ ահա ուղարկում եմ քեզ»*[22]*: Սա էր Մարիամ տատի գանձը, որ նրան այդքան տարի ոգեշնչել ու կյանքի էր կոչել: «Գանձը» նաև որդիական սերն ու նվիրումն էր մոր հանդեպ. ծնողասեր զավակն անգամ վիրավոր, մահվան շեմին չի մոռացել նրան, ով իրեն կյանք է պարգևել, սնել ու խնամել:*

Երբ Երանոսը («Ապրիլ») *փորձում է վաճառել տունը, թաղեցիները՝ Երվանդը, Վահրամը, Ենոքը, սաստիկ բարկացած ձախողում են նրա գործարքը, որովհետև նրանց սրբապղծություն է թվում տան վաճառքի գաղափարը: Կինը՝ Արփենիկը, ևս դեմ է: Հեղինակի համոզմամբ, հայրենի տունը մի մասնիկ հայրենիք է, ուստի այն վաճառքի ենթակա չէ:*

«Հրդեհ»: *Նկարիչ Հարությունը հմայվում է ծիածանի նուրբ երանգներով և հանկարծ հասկանում, որ իր նկարների գույները կոպիտ են, խունացած ու անճաշակ: Հարությունը, որ վաղուց էր որոշել երկրի երեսից վերացնել*

---

[21] *Նույն տեղում, էջ 352:*

[22] *Նույն տեղում, էջ 353:*

չարությունը և ճշմարտությամբ ծառայել Աստծուն, չի կարողանում հավատարիմ մնալ իր խոստմանը: Եվ ինքն իր աչքին նսեմացած՝ նա կրակին է տալիս իր կտավները՝ ինքն էլ այրվելով հրդեհում: Ակումբի պահակ Գարեգինը, որին մարդիկ «մահից մոռացված»[23] էին անվանում, մենակ էր մնացել, քանզի կինը մահացել էր, իսկ երկու որդիները Ռուսաստանում էին: Նա չէր հավատում, որ հրդեհը իր բոցերի մեջ կարող է այնպես այրել մարդուն, որ նրանից ոչ մի հետք չմնա: Գարեգինը համոզված էր, որ օրերից մի օր, չգիտես ինչ անհայտությունից, կրկին հայտնվելու է Հարությունը: Նա կարծում է, որ միայն իրականությունից, բնությունից հեռացած, իրական կյանքի գույները կեղծած արվեստագետն է կորչում անհետ՝ ոչ մի հուշ չթողնելով սերունդների սրտում: «Ասել է թե՝ ինքդ մինչև քո մահը ապրածովդ ես դառնալու այն շարունակությունը, որ մնալու է հավերժությանը: Ասել է թե՝ ինքդ քեզ ես ծնում»[24],- սա է հեղինակի եզրահանգումը:

Ամփոփենք. Ռ. Հովսեփյանի պատմվածքները շատ ընդհանրություններ ունեն նկարագրվող նյութի տեսանկյունից: Մեզ է ներկայանում հեղինակի ապրած մի ժամանակահատված՝ պատերազմը, դրան հաջորդած տարիները՝ հերոսների սոցիալական միջավայրի հոգեբանական խտացումով: Նրա հերոսները կրում են ժողովրդին վիճակված ճակատագրի արհավիրքներն ու հարվածները: Արձակագիրը, իր բարոյախոսությունը, ձգտումները, համոզմունքներն արտահայտելով, չի փորձում հեռանալ իրականությունից: «Գիշերվա խաղաղ ջրտուքի պահին հազար ձայնով խոսող բնությունը, երգող ծղրիդները, ձմեռային ձյունե սառնության մեջ, մահվան հարևանությամբ թրթռացող սերը, ջուրն ագահությամբ ծծող հողը, գարունն իմաստավորող արագիլները լուսավոր երանգներ ու թաքուն գեղեցկություններ են դառնում նրա հերոսների աշխարհում»[25],- Ռ. Հովսեփյանի գործերի գեղարվեստական արժեքն այսպես է ներկայացնում գրականագետ Ժ. Քալանթարյանը: Անշուշտ, տաղանդավոր գրողի ինքնատիպ ու նոր խոսքը ուսումնասիրության սաղմնային փուլում է, ու կարծում ենք՝ ըստ արժանվույն կգնահատվի ոչ միայն ընթերցող հասարակայնության, այլև գրականագիտության կողմից:

РАССКАЗЫ РУБЕНА ОВСЕПЯНА

БАДАЛЯН Г. С.

Резюме

Рубен Овсепян – один из видных представителей современной армянской литературы. Прозаик известен читателю сборниками “Поиски” (1965), “Самая теплая страна” (1977), “Длинный чудесный день” (1980),

---

[23] *Նույն տեղում, էջ 368:*

[24] *Նույն տեղում, էջ 441:*

[25] **Քալանթարյան Ժ.,** *Երկար օրվա չմարող արձագանքը (Գրական թերթ, 20.XI.1981, էջ 4):*

“Чайки” (2009), “Я ваша память” (2003). Рассказы “Гранаты”, “Доставшийся нам обед”, “Восьмая клетка” являются отражением своеобразного стиля Р. Овсепяна: выступая как писатель-реалист, он в то же время вносит в свои произведения элементы романтизма. Рассказам Р. Овсепяна присущи простота и лаконизм, отсутствие излишнего пафоса. В центре внимания прозаика – образ простого человека (“Цоло”, “Урок истории”, “Аисты вернулись”, “Голоса”).

STORIES BY ROUBEN HOVSEPYAN

G. BADALYAN

Abstract

Rouben Hovsepyan is one of the most outstanding representatives of modern Armenian literature. The writer is popular with his readers through the following story collections: “Search” (1965), “The warmest country’’ (1977), “ A long, wonderful day’’ (1980), “The sea-gulls’’ (2009), “ I am your memory’’ (2003). The writer’s specific style is reflected in his stories “Pomegranates’’, “Our portion of meal, ’’ “The eighth cage’’ where he writes as a realist, applying elements of romanticism. His stories are characterized by laconism and absence of pathos focusing on the image of an ordinary man (“Tsolo’’, “The lesson of the history’’, “The storks returned’’, “Voices’’).